ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

Կոնցեռն-Էներգոմաշ ՓԲԸ-ն ԷԱՃԱՊՁԲ-2022/16-10-ԵՊԲՀ ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի			
	ապրանքային նշանը	մակնիշը	արտադրողի անվանումը	տեխնիկական բնութագիրը
1	S7800B	Seahorse XFe96Analyzer	Agilent Technologies	Անալիզատորը թույլ է տալիս չափել միտոքոնդրիալ շնչառության և գլիկոլիզի ինտենսիվությունը՝ ստանալով ֆունկցիոնալ տվյալներ կենդանի բջջի նյութափոխանակության վերաբերյալ 96-խցիկային պլանշետում իրական ժամանակում: Անալիզատորը չափում է կենդանի բջիջներում թթվածնի սպառումը (OCR) և արտաբջջային թթվեցումը (ECAR): Հիմնական բնութագրիչներն են. Սարքն ունի ներմուծման համակարգի 4 մուտք և ավտոմատ խառնելու հնարավորություն, ինչը թույլ է տալիս գնահատել բջիջների պատասխան ռեակցիան տարբեր սուբստրատներին, արգելակիչներին և այլ ազդանյութերին իրական ժամանակում: Սարքը հնարավորություն է տալիս աշխատել առանց որոշվող նյութի ներկման, էքստրակցիայի և նմուշը վնասող

				նախնական մշակման: 96-խցիկային պլանշետային ֆորմատը թույլ է տալիս մշակել մեծ և նյութափոխանակային առավել մեծ ակտիվություն ունեցող նմուշները: Նյութափոխանակության արագության հաշվետվությունը ստացվում է րոպեների ընթացքում առանց սարքից նմուշի հեռացման և դրա ներկման: Բարձր զգայունությունը թույլ է տալիս օգտագործել ընդամենը 5000 հատ բջիջ 96 տեղանոց պլանշետի յուրաքանչյուր խցում: Ճշգրտորեն կառավարվող տաքացման համակարգը պահպանում է նմուշի ջերմաստիճանը 16-42 °C տիրույթում՝ տարբեր աղբյուրներից մեկուսացված նմուշների համատեղելիության համար (սենյակային ջերմաստիճանից առնվազն 12-20 °C բարձր): Wave ծրագրային ապահովումը հնարավորություն է տալիս համակարգչում հեշտորեն ստեղծել փորձարկման արդյունքների արձանագրություններ և վերլուծել տվյալները, ինչպես նաև կցել ստացված արդյունքները էլեկտրոնային աղյուսակների և գրաֆիկական ծրագրերի հետ: Հոսանքի ուժ՝ 9A Վերլուծության հնարավորություններ՝ մեծ նմուշներ Աշխատանքային ծավալը՝ 150 – 275 մկլ/խցիկ Փորձարկվող նմուշների քանակը՝ 92 Կոմունիկացիա՝ TCP/IP, USB, անլար Վերահսկիչի նկարագիրը՝ համակցում Windows 10 (64 bit) ծրագրով համակարգչի և սենսորային էկրանի 1920 մմ x 1680 մմ հետ, 16 ԳԲ հիշողությամբ, կոշտ սկավառակ 500 ԳԲ, ամբողջական վերլուծության դիզայնով, վերահսկման և անալիզի կարողությամբ Վերահսկիչի սենսորային էկրան՝ առկա է Վերահսկիչի

				միացման տեսակ՝ լարով միացում Չափսերը՝ 43 սմ x 61 սմ x 41 սմ ±5% Ներարկման կետերի քանակը՝ յուրաքանչյուր խցիկի համար 4 Հիշողությունը՝ 16 GB Միկրոխցիկի ծավալը՝ 2.8 մկլ Շրջակա միջավայրի հարաբերական խոնավությունը՝ 20-80 % Շրջակա միջավայրի ջերմաստիճանը՝ 4-30 °C Աշխատանքային լարումը՝ 100-240 VAC Նմուշի պահանջները՝ 5,000 - 500,000 բջիջ/խցիկ Նմուշի ջերմաստիճանը՝ 16-42 °C Ծրագրային ապահովումը՝ Wave վերահսկիչ, Windows 10 Enterprise, Wave Desktop-ի համար անսահմանափակ օգտագործման թույլտվություն Ներարկման ծավալը՝ 25 մկլ Քաշը՝ 23 կգ ±5% Սարքը նախատեսված է միայն հետազոտական և ոչ ախտորոշիչ աշխատանքների համար: Սարքի հետ մեկտեղ պետք է տրամադրվի 1000 որոշման համար նախատեսված ռեագենտների ամբողջական հավաքածու: Սարքավորման տեղադրումն ու ուսուցումը կատարվում է արտադրողի սերտիֆիկացված ճարտարագետի կողմից: Եթե տեխնիկական բնութագրում առկա է հղում որևէ առևտրային նշանի, ֆիրմային անվանմանը, արտոնագրին, էսքիզին կամ մոդելին, ծագման երկրին կամ կոնկրետ աղբյուրին կամ արտադրողին, ապա կիրառական է «կամ համարժեք» արտահայտությունը: Երաշխիքային ժամկետ՝ նվազագույնը 730 օրացուցային օր:

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

Концерн-Энергомаш ЗАО в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ԷԱՃԱՊՁԲ-2022/16-10-ԵՊԲՀ ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар			
	товарный знак	марка	наименование производителя	технические характеристики
1				